ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1963 Общественные науки

ՀԱԳՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ռ. Հ. Խաչատրյան

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ (1921 Թ.)

Սովետահայ պատմագրության կարևոր և ակտուալ խնդիրներից մեկը, մեր կարծիքով, արտասահմանի հայկական գաղթավայրերի նոր շրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության գիտական ուսումնասիրությունն է։ Հարցերի այդ ընդհանուր կոմպլեքսում, բնականաբար, առաջնակարգ նշանակություն ունի սփյուռքահայ կոմունիստական շարժման պրոբլեմը, որը, դժբախտաբար, համարյա չի ուսումնասիրվել մեր պատմաբանների կողմից։

Նշված պրոբլեմի լուսաբանման հիմքում մենք դնում ենք մեթոդոլոգիական այն դրույթը, որ կոմունիստական շարժումը սփյուռքահայ այս կամ այն գաղութում պետք է, նախ և առաջ, դիտվի և մեկնաբանվի անխզելի առնչության մեջ տվյալ երկրի կոմունիստական պարտիայի պատմության հետ, որպես տեղական կոմպարտիաների կողմից ազգային փոքրամասնությունների մեջ տարվող ընդհանուր աշխատանքի մի մասը։

Սույն հոդվածում մեր խնդիրն է լուսաբանել այդ պրոբլեմի հանգուցային մոմենտներից մեկը՝ բուլղարահայ կոմունիստների առաջին կոնֆերանսը, որը միաժամանակ առաջին սփյուռքահայ կոմունիստական կոնֆերանսն էր։ Հարցը ուսումնասիրելիս որպես աղբյուր ծառայել են բուլղարական պարտիական և այլ արխիվներում մեր կողմից հայտնաբերված արխիվային փաստաթղթերը, ինչպես նաև բուլղարական կոմունիստական մամուլի և Բուլղարական կոմունիստական պարտիայի հայերեն տպագիր օրգաններից քաղված նյութերը։ Դրանցից գլխավորն են կոնֆերանսի արձանագրությունները, որոնք մինչև այժմ չեն հրապարակվել։

* * *

Բուլղարահայ կոմունիստների առաջին կոնֆերանսը հանրագումարի բերեց կազմակերպական և գաղափարական այն աշխատանքը, որն անց էր կացրել Բուլղարական կոմունիստական պարտիան հայ աշխատավորների շարքերում 1919—1920 թթ.։

Բուլղարական կոմունիստական պարտիան, հավատարիմ մնալով պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին, իր հիմնադրման առաջին իսկ օրից, 1919 թվականի մարտ ամսից, մեծ աշխատանք էր տանում երկրի

---

1 *Տե՛ս Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեին կից ԲԿՊ-ի պատմության ինստիտուտի Կենտրոնական պարտիական արխիվ (ԿՊԱ—Սոֆիա), ֆոնդ № 3, ցուցակ № 1, արխ. միավոր № 14 (Կոնֆերանսի արձանագրությունները), հետագայում կրճատ «Կոնֆերանսի արձանագրություններ», ինչպես նաև Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական օրգան* «Работнически вестник» *և «Կարմիր լուրեր» թերթերը։*

ազգային փոքրամասնությունների, այդ թվում հայերի շրջանում, ներգրավելով նրանց բուլղարական բանվոր դասակարգի ռևոլյուցիոն հզոր շարժման մեջ, որ տեղի էր ունենում երկրում 1919—1923 թթ.։

Արդեն 1919 թվականին ԲԿՊ Կենտկոմի, և անձամբ Վ. Կոլարովի նախաձեռնությամբ ստեղծվեցին Բուլղարական կոմունիստական պարտիայի հայկական խմբերը, իսկ 1919 թ. հունիս ամսին հրապարակվեց բուլղարահայ կոմունիստների պատմական «Կոչ»-ը[2], ուղղված սփյուռքահայ բոլոր աշխատավորներին, նպատակ ունենալով համախմբել նրանց Կոմինտերնի և միջազգային կոմունիստական շարժման դրոշի տակ[3]։

1920 թվականին, Պլովդիվ քաղաքում, կազմակերպվեց հայկական կոմունիստական խմբերի «Մամուլի կոմիտեն», իսկ նույն թվականի հուլիս ամսին լույս տեսավ սփյուռքահայ առաջին կոմունիստական թերթը՝ «Կարմիր լուրեր»-ը[4]։

«Մամուլի կոմիտեն», Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի անմիջական ղեկավարությամբ, 1920 թվականին մեծ աշխատանք կատարեց բուլղարահայ աշխատավորների շրջանում, հրապարակեց և տարածեց մեծ քանակությամբ կոմունիստական թռուցիկներ ու կոչեր, համախմբելով հայ աշխատավորներին ԲԿՊ-ի շուրջը, ներգրավելով նրանց բուլղարական պրոլետարիատի դասակարգային ընդհանուր պայքարի մեջ, ինչպես նաև գլխավորելով նրանց պայքարը հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների և առաջին հերթին՝ դաշնակցության դեմ։

Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, բնականաբար, նպաստեց ԲԿՊ-ի կողմից հայերի մեջ տարվող աշխատանքի, կոմունիստական գաղափարների հետագա ծավալմանը։ Միաժամանակ մեծ աշխատանք սկսվեց Սովետական Հայաստանը պրոպագանդելու և նրան օգնություն կազմակերպելու ուղղությամբ, բուլղարահայ աշխատավորներին Սովետական Հայաստանի գաղափարի շուրջը համախմբելու ուղղությամբ։

Բուլղարահայերի մեջ պարտիական կադրերի առկայությունը, արդեն կատարված աշխատանքի փորձը, այդ աշխատանքի ամփոփման և հետագա ընդլայնման անհրաժեշտությունը հանգեցրին բուլղարահայ կոմունիստների առաջին կոնֆերանսի հրավիրմանը։

Այդ կոնֆերանսը հանրագումարի բերեց հայկական կոմունիստական խմբերի գաղափարական և կազմակերպական աշխատանքը և Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի, ինչպես նաև ԲԿՊ-ի համագումարների քաղաքական գծի հիման վրա մշակեց բուլղարահայ աշխատավորների շրջանում տարվող հետագա աշխատանքի ծրագիրը։

Բուլղարահայ կոմունիստների առաջին կոնֆերանսը տեղի ունեցավ բուլղարական բանվորական և կոմունիստական շարժման բարդ ու հետաքրքիր ժամանակամիջոցում, այդ շարժման վերելքի և երկրում տեղի ունեցող դասա-

---

2 «Կոչ»-ի բնագիրը տե՛ս Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեին կից ԲԿՊ-ի պատմության ինստիտուտի Կենտրոնական պարտիական արխիվ (ԿՊԱ—Սոֆիա), ֆ. № 3, ց. № 1, արխ. միավոր № 7, թ. թ. 16—23։

3 Տե՛ս Պ. Կոկինոս, Սփյուռքահայ կոմունիստների առաջին տպագիր կոչը և նրա պատմական նշանակությունը, «Բաներ Հայաստանի արխիվներից», № 1, 1960, էջ 218—226։

4 Տե՛ս Ռ. Հ. Խաչատրյան, Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960։

կարդային սուր բախումների շրջանում, ԲԿՊ-ի ժողովրդայնության և հեղինակության աճի և բոլոր ռեակցիոն ուժերի դեմ նրա կողմից մղվող ակտիվ պայքարի շրջանում։

1920 թվականը երկրում ռևոլյուցիոն շարժման հետագա վերելքի տարի էր. ԲԿՊ-ն այդ ժամանակ մեծ հաջողությունների հասավ նաև երկրում ծավալվող ընտրական պայքարի գործում։

1920 թվականի մայիս-հունիս ամիսներին տեղի ունեցավ Բուլղարական կոմունիստական պարտիայի երկրորդ համագումարը, որը նշեց պարտիայի ռևոլյուցիոն պայքարի հետագա ուղիները և, մասնավորապես, մշակեց պարտիայի ծրագիրն ու տակտիկան ընտրական պայքարում, դիտելով այն որպես «պրոլետարիատի դասակարգային պայքարի շարունակությունը»[5], խնդիր դնելով աշխատավորների առաջ՝ գրավել օկրուգային և համայնքային խորհուրդները, ինչպես նաև դպրոցական հոգաբարձությունները։

Բուլղարահայ կոմունիստների առաջին կոնֆերանսի աշխատանքներն ընթացան Բուլղարական կոմունիստական պարտիայի երկրորդ համագումարի որոշումների և ցուցումների, ինչպես նաև ԲԿՊ-ի Կենտրոնական կոմիտեի դիրեկտիվների հիման վրա։

Կոնֆերանսը տեղի ունեցավ 1921 թվականի փետրվարի 13 — 14-ին Պլովդիվ քաղաքում «Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ»[6] և նրա ղեկավարության ներքո։ Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին՝ ԲԿՊ Կենտկոմի ներկայացուցիչը և ԲԿՊ-ի Պլովդիվի տեղական կոմիտեի ներկայացուցիչ Վլադիմիր Դիմչևը[7]։

Կոնֆերանսին մասնակցում էին՝ հայկական կոմունիստական խմբերից ընտրված տասնյոթ դելեգատ վճռական ձայնի իրավունքով՝ տասներկուսը Պլովդիվից, երկուսը՝ Ռուսեից, երկուսը Վառնայից և մեկը Սոֆիայից[8], ինչպես նաև մեկ դելեգատ խորհրդակցական ձայնի իրավունքով։

Ականավոր գործիչներ Տիգրան Իսմիյանի[9] և Ստեփան Շահբազյանի[10] հետ մեկտեղ կոնֆերանսի դելեգատների շարքում էին նաև Բուլղարական կոմունիստական պարտիայի ակտիվ անդամներ Գրիգոր Շիշմանյանը (Չիչկո), Գառնիկ Թյությունջյանը, Արտաշես Ասլանյանը, Արթին Մելքոնյանը (Հովհաննիսյան), Արմենակ Թյությունջյանը (Թազվորյան), Միհրան Բակալյանը և ուրիշներ։

---

5 „История Болгарской коммунистической партии", Москва, 1960, էջ 184։

6 Տե՛ս Կոնֆերանսի մասին հրապարակված հաշվետվությունը՝ «Առաջին հայկական կոմունիստական կոնֆերանսը Բուլղարիայում» «Работнически вестник» թերթի 1921 թ. փետրվարի 23-ի համարը, ինչպես նաև «Կարմիր լուրերս» թերթը, 1921 թ., № 3։

7 Նույն տեղում, ինչպես նաև «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 1։

8 Դելեգատների կազմը տե՛ս «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 1։

9 Տիգրան Իսմիյանի կենսագրությունը տե՛ս Тодор Белчов. „Тигран Исмиян (Чичо Исмиян)", „Пловдив" ամսագրում, 1956 թ. № 3, ինչպես նաև մեր հոդվածում «Տիգրան Իսմիյան»,—«Լենինյան ուղիով» ամսագրում, 1963 թ., № 1.

10 Ստեփան Շահբազյան.—ԲԿՊ-ի ականավոր գործիչ և բուլղարահայ կոմունիստների մարտական ղեկավարը։ Ծնվել է 1883 թ. Պլովդիվ քաղաքում։ Պատանի հասակից, Դիմիտր Բլագոևի անմիջական ազդեցության ներքո, մասնակցում է ռևոլյուցիոն շարժմանը, 1903 թվականից Բուլղարական բանվորական սոցիալ-դեմոկրատական (տեսնյակների) պարտիայի անդամ, բուլղարական պրոֆմիութենական շարժման ակտիվ գործիչ։ 1912—1918 թթ. Բալկանյան և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռևոլյուցիոն մեծ աշխատանք է

Կոնֆերանսի աշխատանքները ղեկավարում էր Ստեփան Շահբազյանը։

Բացելով կոնֆերանսը, Ստեփան Շահբազյանն իր ներածական խոսքի մեջ նշեց, որ Հայաստանում սովետական իշխանության հաստատումը հայ աշխատավոր ժողովրդի մեծ հաղթանակն էր։ Այդ հաղթանակը, ասաց Շահբազյանը, արդյունք էր այն բանի, որ երկար տառապանքներից ու մեծ զոհերից հետո, հայ ժողովուրդը Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայի ազդեցության ներքո, գնաց Կոմունիստական ինտերնացիոնալի նշած ուղիով։ Նշելով այն պայմանները, որոնց մեջ տեղի էր ունենում կոնֆերանսը և մատնանշելով այն հարցերը, որոնք պետք է իրենց լուծումը գտնեին կոնֆերանսում, Շահբազյանն առաջ քաշեց բուլղարահայ աշխատավորների մեջ տարվող կոմունիստական պրոպագանդայի և ագիտացիայի հետագա ընդլայնման հարցը՝ որպես կարևորագույն խնդիրներից մեկը[11]։

Կոնֆերանսի բացմանը մեծ և հետաքրքիր ճառով հանդես եկավ ԲԿՊ Կենտկոմի ներկայացուցիչը։ Կենտկոմի անունից ողջունելով կոնֆերանսը և հանձին նրա «բազմաչարչար ու հերոսական հայ ժողովուրդը» և Սովետական Հայաստանը, նա տվեց իմպերիալիստական տերությունների քաղաքականության մանրամասն վերլուծությունը, մասնավորաբար հայ ժողովրդի նկատմամբ և նշեց, որ «առանց ռուսական ռևոլյուցիայի անհնարին էր հայ և մյուս ժողովուրդների ազատագրումը»[12]։

Բացահայտելով իմպերիալիստական տերությունների կողմից Սովետական Ռուսաստանի նկատմամբ տարվող կոնտրռևոլյուցիոն քաղաքականության էությունը, մասնավորապես Կովկասի առնչությամբ, նա հայտնեց սփյուռքահայերի համար կարևորագույն նշանակություն ունեցող այն միտքը, որ մեծ տերությունները «իրականացնելով իրենց նվաճողական քաղաքականությունը, ձգտում են կազմել միասնական ճակատ Սովետական Ռուսաստանի դեմ։ Միայն կույր մարդիկ, որոնք սեփական ժողովրդի ստրկացումն են կամենում և ոչ ազատագրումը, միայն նրանք կարող են պաշտպանել և նեցուկ լինել այդ «ճակատին»։ Հայ ժողովուրդը դառը փորձով համոզվեց, որ իր փրկությունը Սովետական Ռուսաստանի հետ եղբայրական դաշինքի և սովետական իրավակարգի մեջ է[13]։

Այսպիսով, հենց սկզբից կոնֆերանսը ընթացավ Հոկտեմբերյան ռևոլյուցիան պրոպագանդելու, Սովետական Ռուսաստանի հետ համերաշխության,

---

տանում ռազմաճակատում, լինելով 28-րդ հետևակային գնդի ապստամբության կազմակերպիչներից մեկը։ Բազմիցս ընտրվել է ԲԿՊ համագումարների դելեգատ։ 1919 թ. ընտրվում է ԲԿՊ-ի Պլովդիվի քաղաքային և օկրուգային կոմիտեի քարտուղար, ինչպես նաև Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի (Բարձրագույն պարտիական խորհրդի) անդամ։ Ստ. Շահբազյանը «Մամուլի կոմիտեի» նախագահն էր, ինչպես նաև «Կարմիր լուրեր» և «Նոր աշխարհ» թերթերի խմբագիրը։ 1921 թ. այցելում է Սովետական Հայաստան և Բուլղարիա վերադառնալով մեծ աշխատանք է ծավալում Սովետական Հայաստանը պրոպագանդելու և նրան օգնություն կազմակերպելու համար։ Դնդակահարվեց 1923 թ. սեպտեմբեր ամսին Ցանկովի ֆաշիստական կառավարության կողմից որպես բուլղարական պրոլետարիատի Սեպտեմբերյան հերոսական ապստամբության կազմակերպիչներից մեկը։

11 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 1, ինչպես նաև՝ «Работнически вестник»-ի 1921 թ. փետրվարի 23-ի համարը և «Կարմիր լուրեր», 1921 թ., № 4։

12 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 1, ինչպես նաև «Կարմիր լուրեր», 1921 թ., № 4։

13 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 1, ինչպես նաև «Կարմիր լուրեր», 1921 թ., № 4։

սովետական իրավակարգի և Սովետական Հայաստանի պաշտպանության գաղափարական բազայի վրա, մի հանգամանք, որ կարևորագույն նշանակություն ուներ սփյուռքահայ աշխատավորների համար, հատկապես եթե հաշվի առնենք, որ դա դաշնակների փետրվարյան ավանտյուրայի և Հայաստանում քաղաքացիական կռիվների շրջանն էր, երբ Հայաստանի աշխատավորները, զենքը ձեռքներին, պաշտպանում էին սովետական իշխանությունը։

Կոնֆերանսի կարևորագույն խնդիրն էր բուլղարահայ աշխատավորների հետագա ներգրավումը երկրի ռևոլյուցիոն շարժման մեջ Բուլղարական կոմունիստական պարտիայի դրոշի տակ։ Հիմնականում այդ խնդրին էր նվիրված ԲԿՊ Պլովդիվի տեղական կոմիտեի քարտուղար Վլադիմիր Դիմչևի ողջույնի խոսքը։ Ակնարկ նետելով հայ քաղաքական պարտիաների գործունեության և հայ ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի վրա, Վլ. Դիմչևը «կոչ արեց բոլոր հայ բանվորներին և արհեստավորներին համախմբվել Բուլղարական կոմունիստական պարտիայի դրոշի տակ, հանուն կոմունիստական ռևոլյուցիայի հաղթանակի»[14] և նշեց, որ այս գաղափարը հայ աշխատավորներին հասցնելը կոնֆերանսի ու հայկական կոմունիստական խմբերի ամենահիմնական խնդիրն է։

Իր ճառում Վլ. Դիմչևը ասաց. «Այս բոպեին մասնավոր հուզմունքով է, որ կկատարեմ ստանձնած պաշտոնս, ոչ միայն որովհետև ձեր հանձին կբարևվեմ առաջին հայ կոմունիստական խորհրդաժողովը, այլ որովհետև ձեր հանձին կտեսնեմ ներկայացուցիչները հայ հերոսական ժողովուրդի, որը վերջապես իրագործեց բոլոր կոմունիստներու իդեալը, հիմնեց իր երկրին մեջ խորհրդային սոցիալիստական հանրապետությունը[15]»։

Կոնֆերանսը քննարկեց չորս հարց, համապատասխանաբար լսելով չորս զեկուցում. ըստ այս զեկուցումների ընտրվեց չորս հանձնաժողով և ընդունվեցին համապատասխան բանաձևեր։ Քննարկված հարցերի մասին ընդունված բանաձևերն ու որոշումները քաղաքական և պատմական կարևոր փաստաթղթեր են, որոնք լույս են սփռում սփյուռքահայ կոմունիստական շարժման առաջին քայլերի, բուլղարահայ կոմունիստների տեսական և քաղաքական հիմնական դիրքերի վրա և ցույց են տալիս սփյուռքահայ աշխատավորների մեջ նրանց կողմից տարվող աշխատանքի հիմնական ասպեկտները[16]։

Նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կոնֆերանսը հայ իրականության և սփյուռքահայ կոմունիստների խնդիրների հետ կապված բոլոր հարցերը դիտում էր աշխարհում քաղաքական ուժերի հետհոկտեմբերյան ընդհանուր տեղաբաշխման տեսակետից, սերտ առնչության մեջ ընդհանուր միջազգային դրության, դասակարգային պայքարի և միջազգային բանվորական ու կոմունիստական շարժման հետ, Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայի դիրքերից։ Այս դիրքերից էր քննարկվում նաև ազգային հարցը։

Նշված հարցերը շոշափեցին «Միջազգային դրությունը, ազգային հարցը և Երրորդ ինտերնացիոնալը» զեկուցման մեջ։ Կոնֆերանսի դիրքը այս հարցերի շուրջը պարզ արտահայտված է համապատասխան բանաձևում[17]։

14 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 2, ինչպես նաև «Կարմիր լուրեր», 1921 թ., № 5։

15 «Կարմիր լուրեր», 1921 թ., № 5։

16 «Կոնֆերանսի արձանագրություններ»-ը պահպանվել են միայն բուլղարերեն լեզվով։ Տրվող մեջբերումների թարգմանությունը մերն է և այդ պատճառով կատարված է արևելահայերենով։

17 Բանաձևը տե՛ս «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 7։

Բանաձևի մեջ տրվում է ժամանակի միջազգային դրությունը բնորոշող հիմնական երևույթների ճիշտ, մարքս-լենինյան վերլուծությունը։ Բանաձևը նշում էր առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով կապիտալիստական համաշխարհային տնտեսության լիակատար քայքայումը, ինչպես նաև հաղթող տերությունների միջև եղած հակասությունները, գիտելով դրանք որպես միջազգային կյանքի տվյալ էտապի և նրա հետագա զարգացման հիմնական և որոշող գործոններից մեկը։ Բանաձևում ասված է՝

«Այսպիսով, համաշխարհային սպանդի պատճառ դարձած, հին հակասությունները նորից են դրսևորվում հաղթող պետությունների միջև և օրըստօրե ավելի սուր բնույթ են ստանում»։

Սփյուռքահայ աշխատավորների համար կարևորագույն նշանակություն ուներ բանաձևի այն մասը, ուր մերկացվում էր Ազգերի լիգան, որը բնորոշվում էր որպես «կապիտալիստական ավազակների միջազգային ընկերություն»[18]։

Միջազգային կյանքի գլխավոր և որոշող գործոնը կոնֆերանսը համարում էր Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան, «որը համաշխարհային պրոլետարիատի ուղեցույց աստղն է», ինչպես նաև Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հետ կապված միջազգային բանվորական ու կոմունիստական շարժումը և գաղութային ազգային-ազատագրական շարժումները, որոնք համախմբվում են «Ռուսական ռևոլյուցիայի փրկարար դրոշի տակ»։

Ճիշտ վերլուծելով կապիտալիստական աշխարհի հակասությունները, բանաձևը միաժամանակ նշում էր, որ «կապիտալիստական պետությունները համաշխարհային ռևոլյուցիայի վտանգի առաջ կազմակերպվում և ընդհանուր կոնտրռևոլյուցիոն ճակատ են կազմում ընդդեմ ռուսական ռևոլյուցիայի, այդ նպատակի համար ճարպկորեն օգտագործելով ազգային թշնամությունն իրենցից կախյալ փոքր ժողովուրդների և պետությունների միջև»[19]։

Վերը բերված տեսական վերլուծության հիման վրա բանաձևում ձևակերպված էին հիմնական այն սկզբունքները, որոնք կազմում էին հայկական կոմունիստական խմբերի աշխատանքի գաղափարական և քաղաքական հիմքը ազգային հարցում։ Ազգային հարցի լուծման և ազգային-ազատագրական պայքարի ուղիները նշվում էին ելնելով հիմնական այն դրույթից, որ «փոքր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի ազատագրումը կարող է իրականանալ միայն միջազգային պրոլետարիատի և կոմունիզմի հաղթանակով»[20]։

Բանաձևում ասված էր՝ «կոչ ենք անում հայ աշխատավորական մասսաներին երես թեքել հայ նացիոնալիստական պարտիաների շովինիստական պրոպագանդայից, պարտիաների, որոնք Սովետական Հայաստանի հռչակումից հետո ծառայում են միջազգային կոնտրռևոլյուցիային։ Նրանք պետք է լքեն հայ նացիոնալիստական պարտիաները և անցնեն Բուլղարական կոմունիստական պարտիայի դրոշի տակ»[21]։

Այսպիսով, բանաձևում տրվում էր Բուլղարիայի հայկական կոմունիստական խմբերի աշխատանքի քաղաքական ճիշտ ընդհանուր ուղղությունը։

Կոնֆերանսը լսեց և քննարկեց Բուլղարիայի հայկական կոմունիստական

---

18 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 7։

19 Նույն տեղում։

20 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 7։

21 Նույն տեղում։

խմբերի «Մամուլի կոմիտեի» պատասխանատու քարտուղար Գրիգոր Շիշմանյանի (Շիշկո)[22] զեկուցումը՝ «Հաշվետվություն հայկական խմբերի 1919/1920 թթ. գործունեության մասին»[23]։

Զեկուցումը հետաքրքիր նյութեր է պարունակում հաշվետու շրջանում՝ 1919—1920 թթ. բուլղարահայ կոմունիստների գործունեության մասին։ Հաշվետվությունից երևում է, որ այդ ժամանակաշրջանում Բուլղարիայի մի շարք քաղաքներում՝ Պլովդիվում, Ռուսեում, Վառնայում և մյուսներում ստեղծվել էին հայկական կոմունիստական խմբեր, որոնք սկսել էին իրենց գործունեությունը դեռ 1919 թվականից։

Կոնֆերանսը նշեց այդ խմբերի բավարար աշխատանքը, բայց միևնույն ժամանակ ուշադրություն դարձրեց հայկական կոմունիստական խմբերի համեմատաբար ոչ բավարար քանակական աճի վրա և «Մամուլի կոմիտեից» պահանջեց ավելի ընդլայնել իր ազդեցության շրջանակները բուլղարահայ աշխատավորների մեջ։

Կոնֆերանսը լուրջ ուշադրություն դարձրեց գրավոր պրոպագանդայի վրա։ Հաշվետվությունից երևում է, որ այդ ուղղությամբ մեծ աշխատանք էր կատարվել։ Հաշվետու շրջանում հրատարակվել և տարածվել էր 13 անուն թռուցիկ և կոչ 8100 օրինակ ընդհանուր տիրաժով։

Մինչև 1921 թ. հունվարի 1-ը Պլովդիվի խումբը մյուս խմբերի նյութական օգնությամբ հրատարակել էր «Կարմիր լուրեր» թերթի չորս համար 2638 օրինակ ընդհանուր տիրաժով։ 1921 թ. հունվարի 1-ից նույն անվան տակ, սկսել էր լույս տեսնել պարտիական թղթակցություն՝ երկու շաբաթը մեկ անգամ և ամեն համարը 600 օրինակ տիրաժով[24]։

Հանրագումարի բերելով գրավոր պրոպագանդայի բնագավառում կատարված աշխատանքը, կոնֆերանսը նշեց, որ եղած փորձից ելնելով նպատակահարմար է կենտրոնացնել այդ աշխատանքը մեկ մարմնի՝ «Մամուլի կոմիտեի» ձեռքում։ Միաժամանակ կոնֆերանսը նշեց, որ գրավոր պրոպագանդայի հետագա ուժեղացման համար անհրաժեշտ են լրացուցիչ նյութական միջոցներ և կոչ արեց ուժեղացնել «Կարմիր լուրեր» թերթի ֆոնդը։ Որոշվեց գանձել հայ կոմունիստներից քանակական լեվ* հօգուտ այդ ֆոնդի։

Կոնֆերանսը քննարկեց նաև մամուլի աշխատանքի բովանդակության հետ կապված հարցերը և խնդիր դրեց ավելացնել թերթում տպագրվող օրիգինալ և թարգմանական տեսական հոդվածների քանակը։ Առաջ քաշվեց նաև հայերեն լեզվով քաղաքական բրոշյուրներ հրատարակելու հարցը։

---

22 Գրիգոր Շիշմանյան (Շիշկո)—Բուլղարական կոմունիստական պարտիայի հավատարիմ մարտիկ և բուլղարահայ աշխատավորների մեջ ռևոլյուցիոն աշխատանքի կազմակերպիչ։ Ծնվել է 1890 թ. Բուլղարիայի Խասբովո քաղաքում։ 1909 թ. Բուլղարական բանվորական սոցիալ-դեմոկրատական (տեսնյակների) պարտիայի անդամ։ 1909—1914 թթ. մեծ աշխատանք է տարել ռևոլյուցիոն արհմիություններում։ 1912—1913 թթ. եղել է ԲԿՊ Պլովդիվի կոմիտեի քարտուղար։ 1915—1918 թթ. ռևոլյուցիոն աշխատանք է կատարել ռազմաճակատում. պատերազմից հետո աշխատել է արհմիությունների Պլովդիվի խորհրդում որպես ազատված քարտուղար, միաժամանակ լինելով հայկական կոմունիստական խմբերի «Մամուլի կոմիտեի» պատասխանատու քարտուղարը։ Սեպտեմբերյան ապստամբության պարտությունից հետո, 1924 թ. տեղափոխվել է Սովետական Հայաստան։ 1925 թ. ՍՄԿՊ անդամ է։ Այժմ անհատական թոշակառու։

23 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 5։

24 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 5։

* Դրամական միավոր Բուլղարիայում։

Ռուսեի դելեգատ Արտաշես Ասլանյանի առաջարկությամբ կոնֆերանսը որոշեց «Կարմիր լուրեր»-ը փոխարինել ավելի մեծ ֆորմատի և պարբերականության թերթով և այդ նպատակն իրականացնելու համար խնդրել Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեին նյութական օգնություն ցույց տալ հայկական կոմունիստական խմբերին։ ԲԿՊ Կենտկոմի ներկայացուցիչը միացավ այդ առաջարկին և Կենտկոմի անունից անհրաժեշտ օգնություն խոստացավ[25]։

Մի անգամ ևս ընդգծելով իր հավատարմությունը ԲԿՊ-ին և դիտելով հայկական խմբերը որպես ԲԿՊ-ի անբաժան ջոկատ, կոնֆերանսը որոշում կայացրեց՝ հայկական խմբերի նյութական բոլոր միջոցները դնել Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի տրամադրության տակ։

Կոնֆերանսում քննարկվեց սկզբունքային նշանակություն ունեցող այն հարցը, թե ովքեր կարող են հայկական կոմունիստական խմբերի անդամ լինել։

Բանաձևի նախագծում նշված էր, որ այդ խմբերի անդամ կարող են լինել միայն Բուլղարական կոմունիստական պարտիայի անդամները[26]։ Սակայն կոնֆերանսի առանձին դելեգատներ հնարավոր էին գտնում այդ խմբերի մեջ ընդունել ոչ միայն Բուլղարական կոմունիստական պարտիայի անդամներին, այլև՝ համակրողների, այդ առաջարկը պատճառաբանելով խմբակների շրջանակներն ընդլայնելու անհրաժեշտությամբ։

Պետք է նշել, որ այդ հարցում, դեռ մինչև կոնֆերանսը, որոշ ընկերներ արտահայտել էին սխալ կարծիքներ և ցուցաբերել տատանումներ, գտնելով, որ հայկական կոմունիստական խմբերի մեջ կարելի է ընդունել նաև նրանց, ովքեր ԲԿՊ-ի անդամ չեն, իսկ առանձին անձնավորություններ, տուրք տալով նացիոնալ-սպեցիֆիզմին, նույնիսկ առաջ էին քաշում Բուլղարիայում հայկական կոմունիստական ինքնուրույն պարտիա ստեղծելու հարցը։ «Մամուլի կոմիտեն» և բուլղարահայ կոմունիստների ճնշող մեծամասնությունը հենց սկզբից ճիշտ դիրքորոշվեցին այդ հարցում[27] և այդ դիրքորոշումը պաշտոնապես ձևակերպվեց առաջին կոնֆերանսի որոշման մեջ։ Այստեղ քննարկվող հարցը սկզբունքային նշանակություն ունի ոչ միայն առաջին կոնֆերանսը լուսաբանելու համար, այլև՝ Բուլղարական կոմունիստական պարտիայի հայկական խմբերի բնույթը որոշելու համար։

Կոնֆերանսում, ի պաշտպանություն բանաձևի այն դրույթի, որ հայկական կոմունիստական խմբերի անդամ կարող են լինել միայն ԲԿՊ-ի անդամները, հանդես եկան մի շարք դելեգատներ։

Այդ հարցին նվիրված ելույթում դելեգատ Գրիգոր Շիշմանյանը (Շիշկո), պնդելով, որ հայկական կոմունիստական խմբերի անդամ ընդունվեն միայն

---

25 Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտկոմի օգնության շնորհիվ «Կարմիր լուրեր»-ը 1922 թվականից փոխարինվեց կրկնակի ֆորմատի «Նոր աշխարհ» երկշաբաթաթերթով։

26 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 4։

27 Արդեն 1920 թ. հունվար ամսին Բուլղարահայ կոմունիստական խմբերի գլխավոր խորհրդի «Շրջաբերական թիվ 1»-ի մեջ պարզորոշ կերպով ձևակերպված էր միասնական պարտիական և արհմիութենական կազմակերպություններում աշխատելու սկզբունքը և հրաժարումը պարտիական ու արհմիութենական կազմակերպությունների ազգային սկզբունքից։ «Շրջաբերականը» տե՛ս Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեին կից ԲԿՊ-ի պատմության ինստիտուտ. կենտրոնական պարտիական արխիվ, ֆոնդ № 3, ցուցակ № 4, արխ. միավոր № 7, թթ. 2—9։

ԲԿՊ-ի անդամները, նշում էր, որ այլ կերպ չի կարող լինել, քանի որ այդ խմբերը ԲԿՊ-ից անջատ պարտիա չեն և ոչ էլ առանձին պարտիական կազմակերպություն, այլ միայն «կազմակերպական ապարատ», որը պետք է օգնի համաբուլղարական տեղական պարտիական կազմակերպություններին հայերի մեջ տարվող աշխատանքում։ Այդ պատճառով նրանց անդամներն անպայման պետք է լինեն ԲԿՊ-ի անդամներ։

«Մենք պետք է գործենք ինտերնացիոնալ հիմունքներով»—ասում էր Գ. Շիշմանյանը, պատճառաբանելով հայկական բոլոր խմբերի անդամների համար ԲԿՊ-ի անդամ լինելու անհրաժեշտությունը[28]։

Այդ հարցի շուրջը ելույթ ունեցավ նաև ԲԿՊ-ի Կենտկոմի ներկայացուցիչը, որը նշեց, որ հայկական կոմունիստական խմբերը «պարտիական բջիջներ են իրենց հայրենակիցների շարքերում ագիտացիա և պրոպագանդա տանելու համար» և այդ պատճառով նրանց անդամները պետք է ԲԿՊ-ի անդամ լինեն։

Խոսելով Բուլղարական կոմունիստական պարտիայի հայկական խմբերի մասին, անհրաժեշտ ենք համարում բանաձևերի վերլուծության հիման վրա տալ նրանց բնույթի վերջնական ձևակերպումը։ Կոնֆերանսի բանաձևի մեջ ասված է՝

«1. Այն քաղաքներում, ուր կա հայ ազգաբնակչություն (ընդգծումը մերն է—Ռ. Խ.), յուրաքանչյուր պարտիական կազմակերպությանն առընթեր կազմվում են պարտիայի հայ անդամներից հայկական խմբեր։

Այս խմբերը գտնվում են պարտիական տեղական կոմիտեների անմիջական հսկողության ու ղեկավարության տակ»[29]։ Նույն բանաձևի մեջ ասված է, որ այդ խմբերի քարտուղարները «մշտական կապ են պահպանում ԲԿՊ տեղական կոմիտեի հետ»։

Այս ձևակերպումից կարող ենք եզրակացնել, որ ԲԿՊ-ի հայկական կոմունիստական խմբերի կազմակերպումը ինքնանպատակ չէր և չէր հիմնվում հայ կոմունիստներին ազգային պատկանելիության ցուցանիշով անջատելու և առանձին խմբերի մեջ միավորելու սկզբունքի վրա, քանի որ այդ խմբերը ստեղծվում էին ոչ ամենուրեք որտեղ հայ կոմունիստներ կային, այլ միայն այնտեղ, ուր կար «հայ ազգաբնակչություն»։ Հետևաբար այդ խմբերը ոչ թե ինքնուրույն պարտիական կազմակերպություններ էին, այլ բուլղարական միասնական պարտիական կազմակերպությունների «կազմակերպական ապարատ», որը կոչված էր իրականացնելու պարտիայի աշխատանքը հայ աշխատավորների շրջանում ԲԿՊ-ի տեղական կոմիտեների ղեկավարության և հսկողության տակ։

Հաշվի առնելով հենց այս հանգամանքը, ԲԿՊ-ի ներկայացուցիչը կոնֆերանսում նշեց, որ պետք է «գործել բացառապես պարտիական բջիջների միջոցով հայ բանվորներին բանավոր և գրավոր ագիտացիայով մեր շարքերը ներգրավելու համար»[30]։

Անհրաժեշտ ենք համարում ամբողջապես մեջ բերել կոնֆերանսի համապատասխան բանաձևի այն մասը, որտեղ պարզ ու որոշակի նշված են ԲԿՊ-ի հայկական խմբերի խնդիրները։ Բանաձևում ասված է՝

---

28 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 4։
29 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 9։
30 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 4։

«ա) Ծառայեն որպես ագիտացիայի ապարատ հայ բանվորների ու աշխատավորների մեջ կոմունիստական ագիտացիա ու պրոպագանդա մղելու համար։

Այս նպատակին հասնելու համար նրանք իրենց ուժերը տրամադրում են տեղական պարտիական կոմիտեներին, հայ բանվորներին ու բանվորուհիներին համապատասխան արհմիությունների, երիտասարդական կազմակերպությունների, կանանց կոմունիստական խմբակների, ինչպես նաև ԲԿՊ շարքերը ներգրավելու համար։

բ) Կազմում են լուսավորական խմբեր, ուր կարող են ընդունվել կոմունիստական արհեստակցական միությունների և այլ կազմակերպությունների հայ սնդամները, ինչպես նաև կոմունիզմի համակիրները»[31]։

Այսպիսով, բուլղարահայ կոմունիստների առաջին կոնֆերանսը պարտիական որոշումով ձևակերպեց ԲԿՊ-ի հայկական խմբերի բնույթն ու խնդիրները։

Կոնֆերանսը լսեց Ռուսեի դելեգատ Արտաշես Ասլանյանի «Հայկական ընտրական մարմինները» զեկուցումը, բազմանդամանիորեն քննարկեց կարևոր քաղաքական այդ հարցը և ընդունեց համապատասխան որոշում[32]։

Այս հարցում կոնֆերանսն ամրողջովին հիմնվում էր Բուլղարական կոմունիստական պարտիայի երկրորդ համագումարի որոշումների և Գեորգի Դիմիտրովի ցուցումների վրա, որոնցում հստակ կերպով շեշտված էր ընտրական պայքարի և տվյալ էտապում ընտրական մարմինները գրավելու նշանակությունը պարտիայի համար։

ԲԿՊ-ի երկրորդ համագումարը ուղղակի դիրեկտիվ տվեց՝ բացատրել մասսաներին «համայնքային[33] և օկրուգային խորհուրդները իր իսկ աշխատավոր ժողովրդի օրգաններ դարձնելու անհրաժեշտությունը»[34], իսկ Գեորգի Դիմիտրովը բարձր գնահատական տվեց խորհուրդները գրավելու համար պարտիայի կողմից մղվող պայքարին[35]։

Այդ ցուցումներից ելնելով կոնֆերանսը քննարկեց հայ կոմունիստների վերաբերմունքը բուլղարահայ գաղութի հիմնական ընտրական երեք մարմինների հանդեպ և սկզբունքորեն դիրքորոշվեց այդ հարցում։ Այդ մարմիններն էին՝ հայկական եկեղեցական թաղական խորհուրդները, «Հայկական ազգային միությունը» և դպրոցական հոգաբարձությունները։

Կոնֆերանսը տվեց եկեղեցու դասակարգային դերի քաղաքական ճիշտ վերլուծությունը և թաղական խորհուրդների բնորոշումը, նշելով, որ «հայկական եկեղեցական թաղական խորհուրդները, որպես հայ բուրժուազիայի և հոգևորականության հաստատություններ, նպատակ ունեն մշուշապատել և տգիտության մեջ պահել հայ բանվորներին ու արհեստավորներին, և այդ նպատակին հասնելու համար նրանք օգտագործում են դպրոցների ֆինանսական ծանր դրությունը, բաց թողնելով որոշ դրամական միջոցներ[36]։

Կոնֆերանսը որոշեց, որ հայ կոմունիստները սկզբունքորեն չմասնակցեն եկեղեցական թաղական խորհուրդների ընտրություններին, պետք է բոյկոտի

---

31 Նույն տեղում, թ. 9։

32 Բանաձևը՝ տե՛ս «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 8։

33 Քաղաքային խորհուրդներ՝ մունիցիպալիտետներ։

34 „БКП в резолюции и решения", հ. II, էջ 79։

35 Գ. Դիմիտրով, Երկեր, հ. 14, էջ 237։

36 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 8։

ենթարկեն դրանք, միևնույն ժամանակ, ընտրական կամպանիան օգտագործելով ժողովրդական կրթության և կուլտուրայի համար վտանգավոր կրոնականոգին մերկացնելու համար։

Կոնֆերանսը քննարկեց նաև «Հայկական ազգային միության» հարցը և բուլղարահայ կոմունիստների քաղաքական դիրքորոշումը նրա նկատմամբ։ Կոնֆերանսը նշեց, որ այդ «Միությունը», որը «ազգային համագործակցության» ցուցանակի տակ ստանձնել է «ազգային շահերի պաշտպանությունը» իմպերիալիստական դիվանագիտության առաջ, վեր է ածվում իսկական կոնտրռևոլյուցիոն բլոկի։

Այս բնորոշումից ելնելով կոնֆերանսը որոշեց, որ հայ կոմունիստները չմասնակցեն «Հայկական ազգային միության» աշխատանքներին, այլ պետք է բացահայտեն նրան մասնակցող պարտիաների ռեակցիոն բնույթը։

Բուլղարահայ կոմունիստների առաջին կոնֆերանսը մեծ տեղ հատկացրեց հայկական դպրոցների և դպրոցական հոգաբարձությունների ընտրությունների հետ կապված խնդիրներին։ Կոնֆերանսը տվեց բուրժուական դպրոցի և դպրոցական հոգաբարձությունների դասակարգային բնույթի վերլուծությունը։ Այդ առիթով ընդունված բանաձևում նշվում էր, որ հայկական ժողովրդական ուսումնարանները «ներկայումս գտնվում են բուրժուական հայ հոգաբարձուների ձեռքում, ինչպես նաև եկեղեցական թաղական խորհուրդների ձեռքում և այսպիսով այդ դպրոցները վերածվել են այնպիսի մի վայրի, որտեղ աշխատավոր ժողովրդի երեխաները պահվում են մոլորության ու հնազանդության մեջ։ Դպրոցների նյութական ու ֆինանսական կարիքների բավարարումը, ուսուցչական կազմի նշանակումը, ուսումնական ծրագրերի մշակումը թողնված են բուրժուական հոգաբարձություններին, որոնք հարմարեցնում են դրանք բուրժուական մանկավարժության հասկացողություններին»[37]։

Կոնֆերանսը գտավ, որ ստեղծված պայմաններում ավելի նպատակահարմար կլիներ, որ դպրոցները հանձնվեին պետությանը և բուլղարական պաշտոնական օրշչինաներին, ինչպես այդ արվեց այն վայրերում, որտեղ օրշչինաներն անցան կոմունիստների ձեռքը։ Դա, գոնե, կսանձեր հայ բուրժուաների կամայականությունները և նյութական որոշ բազա կտար դպրոցներին։

Միևնույն ժամանակ, կոնֆերանսը ճիշտ դիրք գրավեց դպրոցական ընտրությունների հարցում և ղեկավարվելով ԲԿՊ երկրորդ համագումարի ցուցումներով, որոշեց, որ հայ կոմունիստները պետք է մասնակցեն դպրոցական հոգաբարձությունների ընտրություններին, թեկնածուների իրենց ցուցակով (ԲԿՊ-ի անունից), ոչ մի կոմպրոմիսի մեջ չմտնելով բուրժուական և մանր բուրժուական այլ պարտիաների հետ, հետևողական պայքար մղելով երիտասարդության և աշակերտության վրա դաղափարական ազդեցություն ձեռք բերելու համար։

Կոնֆերանսը քննարկեց դպրոցների հարցը նաև «Մամուլի կոմիտեի» հաշվետվության քննարկման ժամանակ[38]։

Զեկուցման մեջ նշված է, որ հաշվետու ժամանակաշրջանում անց են կացվել դպրոցական հոգաբարձությունների ընտրություններ Պլովդիվում, Ռուսեում, Վառնայում, ուր հայկական կոմունիստական խմբերը մասնակցել են ինքնու-

---

37 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 8։

38 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 5։

բույն ցուցակով Բուլղարական կոմունիստական պարտիայի անունից, ընդ որում Պլովդիվում կոմունիստները ստացել են երկու մանդատ, իսկ Ռուսեում ստացել էին բավականաչափ քվե։

Կոնֆերանսը քննարկեց Պլովդիվի դելեգատ Գրիգոր Շիշմանյանի (Շիշկո) զեկուցումը՝ «Հայ քաղաքական պարտիաները և պրոպագանդայի ու ագիտացիայի կազմակերպումը բուլղարահայ աշխատավորության մեջ» և համապատասխան բանաձև ընդունեց նաև այս հարցի շուրջը[39]։

Բանաձևը նշում էր դաշնակցության և բուրժուական մյուս պարտիաների նացիոնալիստական բնույթը, ցույց էր տալիս, որ այդ պարտիաները «իրենց պրոպագանդայով ու ագիտացիայով նպաստել են հայ աշխատավոր մասսաների հոգիների սիստեմատիկ թունավորմանը, նրանց հոգևոր կուրացմանը և որոշակի ընդգծում էր, որ նրանք ծառայում են «Եվրոպական ֆինանսիստներին, կապիտալիստներին ու իմպերիալիստներին»։

Բանաձևը հատկապես սուր քննադատության ենթարկեց դաշնակցական կոնտրռևոլյուցիոն պարտիան, նշելով, որ այդ պարտիան «երեք տարվա տիրապետության ժամանակ վարած ներքին հակաժողովրդական և արտաքին ստորաքարշ քաղաքականությամբ հայ ժողովրդին բերեց լիակատար կործանում և դրանով իր գերեզմանը փորեց ապստամբ բանակի և ռևոլյուցիոն գյուղացիական մասսաների հարվածների տակ»։

Մերկացնելով հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիաները, կոնֆերանսը կողմնորոշում էր սիյուռքահայ աշխատավորներին դեպի Սովետական Հայաստանը, նշելով, որ «Հայաստանի կոմունիստական պարտիայի տարած հաղթանակով և Հայաստանում Սովետական իշխանության հաստատմամբ՝ հայ ժողովրդի համար ստեղծվեցին ազատության, քաղաքական և տնտեսական ինքնուրույնության ու բարեկեցության երաշխիքներ»։

Բանաձևը անվերապահորեն նշում էր, որ «Բուլղարիայի հայ բանվորների և աշխատավորների լիակատար ազատագրումը կգա միայն կոմունիստական ռևոլյուցիայի հաղթանակով, որը պայմաններ կստեղծի ամեն տեսակ շահագործումը և ազգային ստրկացումը վերացնելու համար»։ Կոնֆերանսն ընդգծում էր, որ «Բուլղարիայի հայ բանվորների ու աշխատավորների միակ տեղը Երրորդ կոմունիստական ինտերնացիոնալի սեկցիայի՝ Բուլղարական կոմունիստական պարտիայի շարքերում է»։

Կոնֆերանսը բուլղարահայ բանվորների և ընդհանրապես աշխատավորների շրջանում տարվող կոմունիստական ագիտացիան և պրոպագանդան բարելավելու ուղղությամբ մի շարք միջոցառումներ նշեց, որոնք պետք է իրականացվեին հայկական կոմունիստական խմբերի և լուսավորական խմբակների միջոցով։ Նա հանձնարարեց «Մամուլի կոմիտեին» հրապարակային ժողովներ և զրույցներ կազմակերպել կոմունիստական և միջազգային պրոլետարական շարժման ակտուալ հարցերի լուսաբանման համար, ինչպես նաև հանձնարարեց ապահովել Բուլղարական կոմունիստական պարտիայի հրատարակությունների և բրոշյուրային գրականության տպագրությունն ու տարածումը հայերեն լեզվով։

Կոնֆերանսը որոշեց, որ հայերեն կոմունիստական գրականության (թեր-

39 Բանաձևը՝ տե՛ս «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. թ. 9—10։

թեր, բրոշյուրներ, թռուցիկներ և այլն) տարածման գործը ամբողջապես կենտրոնանա «Մամուլի կոմիտեի» ձեռքում։

Կոնֆերանսն ընտրեց Մամուլի կոմիտեի նոր կազմ, որի մեջ մտան Ստեփան Շահբազյանը, Գառնիկ Թյությունջյանը, Արտաշես Ասլանյանը, Հարություն Մելքոնյանը (Հովհաննիսյան), Արմենակ Թյությունջյանը և Գրիգոր Շիշմանյանը (պատասխանատու քարտուղար)։

Ընդունված բանաձևի մեջ «Մամուլի կոմիտեի» մասին ասված էր՝ «տպագիր ագիտացիան ավելի լավ ու արդյունավետ կազմակերպելու և այդ գործում անհրաժեշտ միասնություն մտցնելու համար խորհրդակցությունն ընտրում է «Մամուլի կոմիտե», որը հաստատվում է ԲԿՊ Կենտրոնական կոմիտեի կողմից և գործում վերջինիս հսկողության տակ»[40]։

Այդ բանաձևի եզ ափակիչ մասում ասված է, որ կոնֆերանսը «կոչ է անում բոլոր հայ բանվորներին ու աշխատավորներին, հատկապես նրանց, որոնք մտնում են զանազան հայ ազգայնական բուրժուական ու մանրբուրժուական դավաճան պարտիաների մեջ, խզել իրենց կապերը նրանց հետ, թողնել այդ պարտիաների փալաս դարձած դրոշները և շարվել ու համախմբվել կոմունիզմի իսկական տարածող—Բուլղարական կոմունիստական պարտիայի դրոշի տակ և նրա հայկական խմբերի շարքերում»։

Կոնֆերանսը փակեց ԲԿՊ Կենտկոմի ներկայացուցիչը, որը բեղմնավոր աշխատանք ցանկացավ բուլղարահայ կոմունիստներին։ Իր եզրափակիչ ճառում նա ընդգծեց այն հանգամանքը, թե ինչ մեծ նշանակություն ունի Բուլղարիայի ազգային փոքրամասնությունների ճնշված դասակարգերի մասնակցությունը բուլղարական պրոլետարիատի ընդհանուր պայքարին՝ կոմունիզմի և Բուլղարական կոմունիստական պարտիայի գրոշի ներքո և կոչ արեց հայ կոմունիստներին ավելի ուժեղացնել հայ աշխատավորների կոմունիստական դաստիարակության և կազմակերպության գործը[41]։

Կոնֆերանսը հարգեց Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի համար զոհված ընկերների հիշատակը[42]։ «Работнически вестник» թերթում այդ մասին կարդում ենք՝ «Կոնֆերանսը հարգեց նենգորեն սպանված ականավոր հայ կոմունիստ Ստեփան Շահումյանի, ինչպես նաև հայկական սոցիալ-պատրիոտական[43] նախկին կառավարության կողմից սպանված և գնդակահարված մյուս բոլոր հայ կոմունիստների և ռևոլյուցիոներների հիշատակը»[44]։

Կոնֆերանսը բուլղարահայ աշխատավորների անունից ողջույնի նամակներ հղեց Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեին և նրա միջոցով նաև Հայաստանի կոմունիստական պարտիային ու Հայաստանի սովետական կառավարությանը[45]։

Հայաստանի կոմունիստական պարտիային և Հայաստանի սովետական կառավարությանը հղված ողջույնի մեջ դատապարտվում էր հայ բուրժուական պարտիաների և առաջին հերթին դաշնակցության քաղաքականությունը, նըշ-

---

40 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. թ. 9—10։

41 «Работнически вестник», 1921 թ. փետրվարի 23-ի համարը։

42 «Կոնֆերանսի արձանագրություններ», թ. 3։

43 Այսինքն դաշնակցական։

44 «Работнически вестник», 1921 թ. փետրվարի 23-ի համարը։

45 Ողջույնը հրապարակված է «Работнически вестник» թերթի 1921 թ. փետրվարի 23-ի համարում, ինչպես նաև «Կարմիր լուրեր» թերթում, 1921 թ. № 6։

վում էր, որ այդ պարտիաները ղեկք են հանդիսացել կապիտալիստական և իմպերիալիստական օտար տերությունների ձեռքում և որ Հայաստանում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի հետևանքով, ռևոլյուցիայի, որը տապալեց ազգային բուրժուազիայի և նրա պարտիայի գերիշխանությունը, «հայ աշխատավորը, գյուղացին և մանր սեփականատերը իրենց տնտեսական, քաղաքական ու ազգային անկախությունը ձեռք ձգեցին»։

Կոնֆերանսի աշխատանքը լուսաբանվեց մամուլում։ Նրա աշխատանքների մասին հաշվետվություն հրապարակվեց Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական օրգան՝ «Работнически вестник» թերթի 1921 թ. փետրվարի 23-ի համարում, ինչպես նաև «Կարմիր լուրեր» թերթում[46]։

«Работнически вестник» թերթի էջերում կոնֆերանսի լայն լուսաբանման փաստն արդեն վկայում է այն ուշադրության մասին, որ նվիրում էր ԲԿՊ Կենտկոմը հայկական կոմունիստական խմբերի աշխատանքին։

Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեն և նրա օրգան «Работнически вестник»-ը բարձր գնահատական տվեցին կոնֆերանսի աշխատանքներին։ Հաշվետվության մեջ ասված է՝ «Բոլոր զեկուցումները լավ քննարկվեցին։ Բոլոր հարցերը հանգամանորեն քննելու հետևանքով հատուկ բանաձևեր ընդունվեցին, որոնք Կենտրոնական կոմիտեի կողմից հավանություն ստանալուց հետո, կտպագրվեն հայերեն լեզվով, Բուլղարիայի հայ բանվորների և չքավորների շրջանում տարածելու համար»[47]։

Այսպիսին են բուլղարահայ կոմունիստների առաջին կոնֆերանսում քննարկված հիմնական հարցերը և այդ կոնֆերանսի հետ կապված հիմնական փաստաթղթերը։

* * *

Բուլղարահայ կոմունիստների առաջին կոնֆերանսի նշանակությունը դուրս է գալիս բուլղարահայության շրջանակներից։ Կոնֆերանսի նյութերում, ըստ էության, սկզբունքային վերլուծման ենթարկվեցին ընդհանրապես հայ գաղթավայրերի աշխատավորության պայքարի հետ կապված հարցերը։ Կոնֆերանսի կոչերը ուղղված են ամբողջ սփյուռքահայությանը։ Կոնֆերանսի որոշ նյութեր, որոնք հրապարակվեցին մամուլում, մուտք գործեցին և այլ գաղթավայրեր, բերելով իրենց հետ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և կոմունիստական ինտերնացիոնալիզմի գաղափարները։ Այդ կոնֆերանսը առհասարակ սփյուռքահայ առաջին կոմունիստական կոնֆերանսն էր, և հետևաբար կարևոր ուղենիշ դարձավ, նոր էտապ նշանավորելով սփյուռքահայության հասարակական-քաղաքական կյանքի և հասարակական մտքի զարգացման մեջ. դա սփյուռքահայ աշխատավորներին տեղական կոմունիստական պարտիաների և Կոմունիստական ինտերնացիոնալի դրոշի շուրջը համախմբելու սկիզբն էր։

---

46 Տե՛ս «Կարմիր լուրեր», 1921 թ. № № 3, 4, 5, 6։

47 «Работнически вестник», 1921 թ. փետրվարի 23-ի համարը։